«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

8 Փետրվարի 2022, N 8 - 6

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լսելով և քննարկելով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման և ատեստավորման կանոնակարգում փոփոխություններ կատարելու մասին հարցը, **հաշվի առնելով** «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի 2021 թվականի փետրվարի 4-ի «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կառուցվածքը հաստատելու մասին» N 1-4 որոշումը, ակադեմիական կազմի վերապատրաստման գործընթացում մասնագիտական ամբիոնների, շարունակական կրթության բաժնի և համապատասխան ֆակուլտետների համագործակցության ներդաշնակեցման անհրաժեշտությունը, **հիմք ընդունելով** «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է.**

1. «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2021 թվականի հունվարի 22-ի N 6-3 որոշմամբ հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման և ատեստավորման կանոնակարգում կատարել հետևյալ փոփոխությունները.
   1) **7-րդ կետը** շարադրել հետևյալ խմբագրությամբ՝
      «7. ՀՊՏՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական վերապատրաստման ծրագրերը մշակվում են համապատասխան ամբիոնների

կողմից, քննարկվում ամբիոնների նիստերում և դրական եզրակացությամբ ներկայացվում ֆակուլտետի գիտական խորհրդի և ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի հաստատմանը:».

2) **8-րդ կետը** շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«8. ՀՊՏՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման և ատեստավորման գործընթացների կազմակերպման պարտականությունը դրվում է ՀՊՏՀ-ի շարունակական կրթության բաժնի վրա:».

3) **9-րդ կետի 2-րդ պարբերությունը** շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«9. ...Մասնագիտական պատրաստվածության ծրագրով վերապատրաստումն ապահովում է մասնագիտության բնագավառի արդի հիմնախնդիրների և նոր հմտությունների յուրացումը՝ ՀՊՏՀ-ի կրթական համապատասխան ծրագրերին և դասընթացների ծրագրերին համապատասխան:...».

4) **16-րդ կետը** աշարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«16. Դասախոսի վերապատրաստումն ավարտվում է ատեստավորմամբ (մասնագիտականը՝ 100 միավոր գնահատմամբ, մանկավարժականը՝ մասնակցության արդյունքներով), որով որոշվում է ստուգվողի՝ ուսուցման ծրագրով ստացած գիտելիքի, հմտության և կարողության համապատասխանությունը նրա զբաղեցրած պաշտոնի պահանջներին և որակավորման չափանիշներին:».

5) **22-րդ կետը** շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«22. Մասնագիտական ատեստավորման անցկացման ձևը որոշում է ամբիոնը՝ ելնելով ամբիոնի ուղղվածությունից, դասավանդվող առարկաների մասնագիտական ուղղվածությունից: Ատեստավորման անցկացման ձևը քննարկվում է ամբիոնների նիստերում և դրական եզրակացությամբ ներկայացվում ֆակուլտետի գիտական խորհրդի և ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի հաստատմանը:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

2022 թ. փետրվարի 8
Երևան